ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՎԻԿՏՈՐՅԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ԱՍՏԱՆԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Վիկտորյա Հովակիմյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության միջազգային համագործակցության վարչության ԵՄ և միջազգային կազմակերպությունների բաժնի գլխավոր մասնագետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ղազախստանի Հանրապետություն (քաղաք Աստանա), 2024թ. մարտի 7:

4. **Հրավիրող կողմը.**

Միավորված ազգերի կազմակերպության Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UNESCAP) Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և աղետների ռիսկի նվազեցման բաժին:

Ղազախստանի Հանրապետության թվային զարգացման, նորարարությունների և օդատիեզերական արդյունաբերության նախարարություն:

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն Միավորված ազգերի կազմակերպության Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UNESCAP) թվային տեխնոլոգիաների ներդրման և փոխակերպման նախարարների համաժողովին ընդառաջ ոչ պաշտոնական բանակցային խմբի առաջին հանդիպմանը:

6. **Քննարկված թեմաները.**

2024թ. սեպտեմբերի 3-5-ը Ղազախստանի Հանրապետությունում (ք. Աստանա) նախատեսվում է կազմակերպել ՄԱԿ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի

տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UNESCAP) թվային տեխնոլոգիաների ներդրման և փոխակերպման նախարարների համաժողովը: Համաժողովի նպատակը Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի թվային ներառականության և փոխակերպման համար թվային համագործակցության նախարարական տեսլականի սահմանումն է:

2024թ. մարտի 7-ին քաղաք Աստանայում կայացել է ՄԱԿ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UNESCAP) թվային տեխնոլոգիաների ներդրման և փոխակերպման նախարարների համաժողովին ընդառաջ ոչ պաշտոնական բանակցային խմբի առաջին հանդիպումը: Հանդիպումը կազմակերպված էր հիբրիդային ձևաչափով: Հանդիպմանը տեղում մասնակցել է աշխատանքային խմբի անդամ՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության միջազգային համագործակցության վարչության ԵՄ և միջազգային կազմակերպությունների բաժնի գլխավոր մասնագետ Վիկտորյա Հովակիմյանը, իսկ առցանց ձևաչափով մասնակցել են աշխատանքային խմբի անդամ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության գլխավոր մասնագետ Նուշիկ Պետրոսյանը, ինչպես նաև ՀՀ արտաքին գործերի նախարարության բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչության բազմակողմ տնտեսական համագործակցության բաժնի առաջին քարտուղար Անդրանիկ Գրիգորյանը և կցորդ Թագուհի Փարեմուզյանը:

Հիբրիդային հանդիպմանը մասնակցում էին 60 մասնակից (13-ը՝ տեղում և 47 առցանց)՝ այդ թվում Հայաստանի Հանրապետությունից, Բանգլադեշի Ժողովրդական Հանրապետությունից, Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից, Իրանի Իսլամական Հանրապետությունից, Ճապոնիայից, Ղազախստանի Հանրապետությունից, Ղրղզստանի Հանրապետությունից, Կորեայի Հանրապետությունից, Ֆիլիպինների Հանրապետությունից, Ռուսաստանի Դաշնությունից, Տաջիկստանից, Թայլանդի Թագավորությունից, Թուրքիայից, Միացյալ Թագավորությունից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Ուզբեկստանից և այլն:

Հանդիպմանը բացման խոսքով հանդես եկան Ղազախստանի Հանրապետության թվային զարգացման, նորարարությունների և օդատիեզերական արդյունաբերության նախարար Բագդատ Մուսինը և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական

և սոցիալական հանձնաժողովի (UNESCAP) տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և աղետների ռիսկի նվազեցման բաժնի ղեկավար Տիցիանա Բոնապաչեն:

Նախարար Բագդատ Մուսինը իր ելույթում նշեց, որ գաղտնիք չէ, որ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տարբեր երկրներ թվային ծառայությունների հասանելիության տարբեր աստիճաններ ունեն և, որ թվային նորարարությունը կարող է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի սոցիալ-տնտեսական և շրջակա միջավայրի զարգացման համար նոր հնարավորություններ ստեղծել: Ղազախստանի Կառավարությունը վստահ է, որ Միավորված ազգերի կազմակերպության Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի հետ համագործակցությունը վճռորոշ դեր է խաղալու թվայնացման ոլորտում շատ երկրների առկա խոչընդոտների հաղթահարման ու կայուն զարգացման նպատակներին հասնելու համար և շնորհակալություն հայտնեց անդամ-պետություններին տարածաշրջանում թվային փոփոխությունները խթանելու հարցում իրենց ներդրումն ունենալու համար: Նախարարը նշեց, որ «UNESCAP»-ի 79-րդ նիստի ժամանակ անդամ-պետությունները հավանություն են տվել Ղազախստանի Հանրապետությունում Թվային լուծումների կենտրոնի ստեղծման բանաձևին, ինչը կօգնի թվային ոլորտում բոլոր պետություններին առաջ շարժվել միասնականորեն: Միաժամանակ նախարար Մուսինը հավելեց «COVID-19» համավարակի հետևանքով իրականացված փոփոխությունների և թվայնացման ոլորտի զարգացման վերաբերյալ:

Տիցիանա Բոնապաչեն իր ելույթում շնորհակալություն հայտնեց Ղազախստանի Կառավարությանը համագործակցության համար, ինչպես նաև մասնակից պետություններին նախարարական հռչակագրի նախագծի վերաբերյալ մեկնաբանություններ ներկայացնելու համար: Տիցիանա Բոնապաչեն իր ելույթում նշեց նաև թվային դարաշրջանում միասնական շարժվելու և կայանալիք նախարարական հանդիպման արդյունքների կարևորությունն: Վերջինիս կողմից ներկայացվեցին նաև բանակցային խմբի հանդիպումների հետագա օրակարգը: Ակնկալվում է, որ ոչ պաշտոնական բանակցային խումբը դեռ առնվազն 3 անգամ պետք է հանդիպի մինչ 2024 թվականի հունիս/հուլիս ամիսները:

Բանակցային խմբի նախագահող անդամների ընտրություններից հետո նախագահությունը ստանձնեց Բանգկոկում Ղազախստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Արման Իսետովը և մեկնարկեցին քննարկումները հռչակագրի նախագծի

վերաբերյալ՝ ըստ պարբերությունների: Քննարկումներին հիմնականում ակտիվ մասնակցում էին Ռուսաստանի Դաշնության, Ճապոնիայի, ԱՄՆ-ի, Միացյալ Թագավորության, Հարավային Կորեայի, Իրանի Իսլամական Հանրապետության և Բանգլադեշի ներկայացուցիչները:

Բոլոր պետությունների կողմից ներկայացված առաջարկություններով և դիտողություններով հոչակագրի նախագիծը «UNESCAP» քարտուղարության կողմից կրկին ուղարկվել է հանդիպման մասնակիցներին՝ ճշգրտելու արդյոք բոլոր առաջարկություններն ու դիտողությունները նախագծում ներառված են և խնդրել են մինչև 2024 թվականի մարտի 29-ը առակայության դեպում ներկայացնել լրացուցիչ գրավոր նկատառումներ:

Հանդիպման ավարտից հետո Ղազախստանի Կառավարությունը կազմակերպել էր այցեր Ղազախստանի Հանրային ծառայությունների կենտրոն, ինչպես նաև Թվային կառավարության գրասենյակ: Հանրային ծառայությունների կենտրոնական գրասենյակ այցի ժամանակ ներկայացվել են բոլոր այն ծառայությունները, որոնք ընդգրկված են գրասենյակներում, ծառայությունների մատուցման թվային լուծումները, այն համակարգերը որոնք ներդրված են քաղաքացիներին սպասարկման գործընթացները դյուրին դարձնելու համար, ծառայություններից թվային հարթակներում օգտվելու համար մեկնարկային գործընթացները, ինչպես նաև դրանց համար օգտագործվող տեխնոլոգիաները:

Թվային կառավարության գրասենյակ այցի ընթացքում ներկայացվել են գրասենյակի կողմից մշակված կայքերն ու հավելվածները, որոնք կիրառվում են են Ղազախստանի Հանրապետության կառավարության և քաղաքացիների կողմից: Մասնավորապես՝ «Smart Data Ukimet» տեղեկատվական հաղորդակցման ծառայությունների հարթակը, որը նախատեսված է պետական մարմինների տեղեկատվական համակարգերում կուտակված տվյալների հավաքագրման, պահպանման և համապարփակ վերլուծության համար, «e.gov» հավելվածը, որը ներառում է ծառայությունների լայն շրջանակ, ինչպես նաև ներկայացվեցին Ղազախստանի Հանրապետության արբանյակները և դրանց օգտագործման միջոցով ստեղծված թվային լուծումները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Բանակցային խմբի առաջին հանդիպման ընթացքում ըստ օրակարգի պետք է ընտրվեին աշխատանքային խմբի համանախագահողները և նախագահների տեղակալները:

Հանդիպման ընթացքում UNESCAP-ի կողմից նշանակված մոդերատորը պետությունների ներկայացուցիչներին խնդրեց ներկայացնել թեկնածություններ՝ վերոնշյալ պաշտոններում նշանակվելու համար: ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության միջազգային համագործակցության վարչության ԵՄ և միջազգային կազմակերպությունների բաժնի գլխավոր մասնագետ Վիկտորյա Հովակիմյանը ներկայացվեց Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածությունները, մասնավորապես՝ Ղազախստանի Հանրապետության թվային զարգացման, նորարարությունների և օդատիեզերական արդյունաբերության նախարարի տեղակալ Ասկար Ժամբակինի և Բանգկոկում Ղազախստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Արման Իսետովի թեկնածությունները՝ որպես նախագահներ նշանակվելու և Ֆիլիպինների Հանրապետության Տեղեկատվական և հաղորդակության տեխնոլոգիաների դեպարտամենտի օժանդակող քարտուղար Էդվին Լիգոտի և Կորեայի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների նախարարության ավագ գիտաշխատող Նամ Սանգյիլի թեկնածությունները՝ որպես նախագահների տեղակալներ նշանակվելու համար: Հայկական կողմից առաջադրված թեկնածությունները երկրորդեց նաև Ղրղզստանի Հանրապետության ներկայացուցիչը: Վերոնշյալ անձանց թեկնածությունները ընդունվեցին միաձայն:

Նախարարական հռչակագրի նախագծի 5-րդ պարբերությունը քննարկելիս, որը ողջունում է ՄԱԿ-ի Կենտրոնական Ասիայի տնտեսությունների հատուկ ծրագրի (SPECA) Բաքվում 2023թ. անցկացված տնտեսական ֆորումի եզրակացություններն ու առաջարկությունները, ՀՀ արտաքին գործերի նախարարության բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչություն բազմակողմ տնտեսական համագործակցության բաժնի առաջին քարտուղար Անդրանիկ Գրիգորյանի կողմից առաջարկվել է 5-րդ պարբերությունն ընդհանրապես հանել նախարարական հռչակագրի նախագծից, քանի որ Բաքվում անցկացված Կենտրոնական Ասիայի տնտեսությունների համար ՄԱԿ-ի հատուկ ծրագրի (SPECA) տնտեսական ֆորումի եզրակացությունները և առաջարկությունները ընդգրկում են թվային ներառման և փոխակերպման ոլորտին չվերաբերվող թեմաների լայն շրջանակ:

5-րդ պարբերության նախագծից հանման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի դիրքորոշմանը միացան նաև Իրանի Իսլամական Հանրապետության և Միացյալ Թագավորության ներկայացուցիչները՝ ներկայացնելով նույն պարզաբանումը:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Բոլոր պետությունների կողմից ներկայացված առաջարկություններով և դիտողություններով հռչակագրի նախագիծը «UNESCAP» քարտուղարության կողմից կրկին ուղարկվել է հանդիպման մասնակիցներին՝ ճշգրտելու արդյոք բոլոր կարծիքներն նախագծում ներառված են և խնդրել են մինչև 2024 թվականի մարտի 29-ը առակայության դեպում ներկայացնել լրացուցիչ գրավոր նկատառումներ:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

ՎԻԿՏՈՐՅԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

15.03.2024թ.